

կարծիքը, հայրենասիրութիւնդ՝ քեզ բանի բերել տալու արուեստ մը :

Բարեսէր մարդը ուրիշի վրայ ինչ և իցէ բարիք մը տեսնելու որ ըլլայ՝ կ'ուրախանայ . իսկ նախանձոտին երեսին վրայ կապոյտ գոյն մը կայ միշտ, մարմնոյն վրայ հալումաշ, աչքը ուրիշին բարեացը վրայ ոչ երբէք շիտակ կը նայի, ճակատը մտածմունքի մէջ՝ թէ ինչպէս կրնայ արգելուլ ուրիշի բարիքը, սիրտը թոյնով լի, լեզուն ալ անոր լեզիւով կանաչցած . ծաղը չկայ երեսը, թէ որ ժպտելու ալ ըլլայ՝ ուրիշի չարեացը վրայ է . քունը հանգիստ չէ, հոգեւոր կը տապըլտըկի՝ ուրիշներուն յաջողութիւնը իրեն տանջանք ընելով : Իսկ որ անոնց յաջողութիւնը՝ իրեն ձախորդութեան պատճառ մը ըլլայ, ներելի էր . բայց նախանձոտինը՝ ան ալ չէ, հապա կ'ուզէ որ ուրիշի վրայ բարիք մը չտեսնէ, կ'ուզէ որ ամէնքը իրմէ թշուառ, իրմէ անմիտ, իրմէ անարգ ըլլան . ըսել է որ աշխարհիս մէջ արդէն եղած թշուառութեանցը գոհ չէ, կ'ուզէ որ աւելի թշուառութեամբ լի ըլլար աշխարհս : Հեթանոսներուն առասպելները շատ անգամ խելացի իմաստներ ունին . Բրամազդ նախանձոտի մը հրամմեր է անգամ մը որ Խնդրէ՝ ինչ որ կ'ուզես կուտամ, բայց աս սլայմանով որ ինչ որ քեզի տալու ըլլամ՝ անոր կրկինը պիտոր տամքու ընկերոջդ : Եւ նախանձոտը որպէս զի իր ընկերը իրմէ աւելի բան չունենայ, խնդրեր է որ մէկ աչքը կուրնայ, որպէս զի ընկերը երկու աչքէն ալ զրկուի :

Բայց հեթանոսաց առասպելներուն կարօտ չենք՝ նախանձին չարութիւնը իմանալու համար . մեր սուրբ հաւատքը մեզի կը սորվեցընէ որ աշխարհիս ամէն չարիքը նախանձէն առաջ եկաւ : Եւ Երեմիայի որ քան զամէն չար մեծագոյնն է՝ Եստուծոյ չեղաւ կ'ըսէ Երեմիայի Եստուծոյ . « Օ՛ր Եստուծոյ զմահ ոչ արար » . վասն զի զմեզ իրեն պէս անմահ ըրաւ . « Հաստատեաց զմարդն յանեղծութեան՝ ի պատկեր իւրոյ բարերարութեանն » : Հապա ինչպէս աս

դահճին ձեռքն ինկանք . սատանային նախանձելով՝ որ չըլլայ թէ իրեն կամօք կորսնցուցած բարիքը մենք ունենանք . « Եւ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ » : Եւրեմի որչափ որ բարեսէր մարդը ուրիշին բարիքը ուզելով՝ Եստուծոյ նման կ'ըլլայ, ասանկ ալ նախանձոտը ուրիշին բարեացը արգելք ըլլալով՝ սատանային նման կ'ընէ ինք զինքը :

*

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Խ. Դան Բաբայան :

Երբ ընկերներու ունի արցունք՝ ունի հառաչանք՝ մահուան իրմէ յափշտակած աւարներուն վրայ սփռելով սիրտը պաղը շարժեցընելու : Եւրեմի որ կ'ազգէ մեզի լալու մեր եղբարց մեր սիրելեաց վրայ՝ որ մեզմէ վերցուած այլ պիտի չգառնան . և մանաւանդ անոնց վրայ աւելի կսկըծցընել կուտայ՝ որոնք աւելի իրաւունք ունին մեր սրտցաւութեանը, իրենց մեզի կամ ազգերնուս տուած կամ տալու ապահով վայելմունքին և բարեացը համար : Եւ ինչպէս, և կը ցաւինք անոնց վրայ, բայց չենք կրնար բողոքել, վասն զի մահուան հարկը անհրաժարելի է :

Եւ մաստուութիւնն ալ որ գթութենէ վար կիրք մը չէ մեր բնութեան մէջ, ունի իրեն արցունքը, իրեն հառաչանք մոլորանքները և մտաւու սրտեր, որ կուլան երբոր իր բանաւոր ծննդոցն ալ մէկը վախճանի . և այնչափ առաւել կ'ըլլայ ասոնց ցաւն ալ՝ որչափ որ վերոյիշեալ գովելի յատկութիւններն ունեցած ըլլան : Եւրեմի վրայ ոչ միայն ցաւելու՝ այլ և բողոքելու իրաւունք ունինք . վասն զի իմաստասիրութեան ծննդոց մահը չէ անհրաժարելի, հապա կամաւ ներգործած . մեր ձեռքն է անոնց մահը և յարութիւնն ալ :

Մասեաց մուշաներէն մէկը այսօր նստեր կուլայ հեռաւոր ամառաց վրայ իր մէկ զուարթուն զաւկին վախճանը . այն լացին հետ կը խառնէ հին ցաւեր ալ , որոնցմով շատ ու շատ հեղ լեղի արցունքներ թափեր է ընկերներովը մէկտեղ՝ այն ծերացած և քան զՍիմ պոս վսեմ լեռանը գլուխը , քանի անգամ որ խորենացոյն դառնութեամբ խոստովանած Մուստումնասիրութեան կիրքը և անոր հետևանքները տեսեր են իրենց Հայկազնեան որդւոց վրայ , զորոնք միշտ սիրած են , բայց ոչ միշտ անոնցմէ սիրուած :

Հայաստանի փառազուրկ դարերուն առէն , Մարատեան գաւառներուն մէջ , Մասեաց և Սիմիածնայ և Սախ իջևանայ սրբազան շուքերուն ներքեւ քաղաքագեօղ մը կար , մանաւանդ թէ մայրաքաղաք մեծութեան և թերևս այն ատենուան աշխարհիս առաջին հարուստ շահաստանը , որ հիմայ աւերակներով ծածկած է մեզմէ ինչուան իր անցած մեծութեան պատմութիւնն ալ , միայն անոր ամենամեծ յիշատակ մը թողլով իր բանաւոր աւերակները իր բնակիչքը , որ խլուած զօրաւոր ծառի մը պէս օտար աշխարհի մէջ տնկուելով , հոն ալ այնչափ մեծցաւ , որուն ճիւղերը բոլոր Արոպայի անուանի քաղաքները տարածուեցան , և մեզի խոր ըզգացմունք մը թողուցին , թէ երբ այս փոխառնկած ծառը այսչափ որ աճեցաւ , հապա ինչ գերաստիճան բարգաւաճած էր այն ծառը իր բնական երասխափտակ ամառացը վրայ :

Աւաթեւ բաղբը որ խորշակի պէս անցնելով ցամքեցուց այն ծառը , այն Հայոց յետին շահաստան Հին Սուղային , նոյն նախանձոտ բաղբը անցաւ Սոր Սուղային վրայէն ալ . Ֆիդանք , Պարսիկք , Սուլեանք երկրորդ անգամ ցնցեցին այն աճիւնաճիւղ ծառը , թափթրփեցին ծաղկըները , ու պտուղները քաղեցին ու ցրուեցին : Միմաստը դեռ տակ առած կեցած է հոն քանի մը ճղերով , քանի մը ծաղկըներով ու պտղով . բայց աւելի յիշատակ մըն է

քան թէ օրինակ այն պանծալի Սոր Սուղային , որ երեսուն դեղեցիկ եկեղեցի ունէր , վանքեր ալ զատ , մեծամեծ քարէ կարմնի , սկաւառակներն ոսկով կը լեցուէին , բաժակներն մարգրտով , և արծաթալից պարկերով . Օհնտէրուտ գետին ընթացքը կը կրտրէր :

Սին անգութ ցնցմանց ատեն՝ նորէն գաղթականներէն ելան նոր գաղթականներ . շատերը անցան գացին ցամաքներ ու ծովեր , Սվկիանոսին ալ լեաց դրացի եղան , հնդկաց ամուսնքը սփռուեցան նոր փոխատնկութեամբ : Հայոց բաղբն հակառակ՝ բայց հանձարն յաջողակ , առատ և զօրաւոր կենդանական հիւթով՝ այն ծառին ճղերը նոր երկրին մէջ ալ տնկուելով , աճեցան , զօրացան , ծաղկեցան : Քանի որ հնդկաց ձեռքն էր այն երկիրները՝ Հայերն էին այն տեղուանց առաջին ճարտար բնակիչքը . երբոր Մագդիացին իր քաղուկ ձեռքը երկընցուց , իրաւ Հայոց դուռ մը գոցուեցաւ , բայց ուրիշ դիւրութիւններ ալ բացուեցան վաճառականութեան , որով ինչուան հիմայ ալ կան հոն վաճառականք թէպէտ և նուազած իրենց հայրերէն , բայց դեռ Հին ու Սոր Սուղայք կը տեսնեն անոնց վրայ իրենց նշանները :

Ամաստութիւնը որ շատ հեղ տնանկութեան մէջ կը ծնանի և տառապանօք կը դեգերի , բայց առանց ճիւղութեան ձեռք տալուն չի կրնար աճիլ ու իր պրտողները վայլեցնել , տեսնելով այս գաղթականներուս դիւրութիւնը , ցաւազին և այրիացեալ Հայաստանին երկնածրար ծայրէն իջուց զրկեց մուգայ մը Մատրասու և Սալկաթայի եզերքը , որ հեռուէն ալ ըլլայ՝ իմաստութեան ջահ մը վերցրնելով՝ նշոյլ մը ծագեն Հայոց խաւարաբնակ զաւակացը վրայ : Սյսպէս երկու Քարերարք մէյմէկ կերպով պատճառ եղան որ հիմայ երկու մեծ դպրոց Արոպայի ամենէն անուանի և խալիւոյ ամենէն զարմանալի քաղքըներուն մէջ՝ անոնց արդիւնքն ու դիտմունքը ուղղելով , անոնց անուան փա-

ուացը հետ Հին Սուղային ալ հոգե-
զաւակ մը կը սեպուին :

Բայց այս օտարէն օտարացած ճիւ-
ղերը բաւական չէր Սուղայի մը գաղ-
թականաց անուան՝ ևս առաւել իրենց
պիտոյիցը . ուրեմն մնւղայն շարժեց
նոր սրտեր որ Կալկաթայի մէջ Սար-
դասիրական ճեմարան մը կանգնեցին ,
տպարան մը հաստատեցին , ինչպէս կը
վայլէր անանկ հանգիստ բնակութիւն
ունեցող Հայոց . և բաւական արդիւ-
նաւորեցան այն տարիները , որ դեռ ու-
րիշ շատ տեղուանք զուրկ էին այս բա-
նաւոր վայելմունքներէն :

Իսկ երբոր Հայ մուզանները համար-
ձակութիւն առին թուշեւու ուրիշ կող-
մեր ալ , և մեծ ու պզտի տաճարներ
կանգնել հայկական դպրութեան , ըն-
կերութիւններ հաստատել , դպրոցներ
բանալ , օրագիրներ հրատարակել ,
պէտք էր որ հնդկաբնակ Հայերն ալ
վար չմնային ազգակցաց նոր յառաջա-
դիմութենէն . ուրեմն հոն տեղի մու-
ղայն յորդոր եղաւ ու Բարատեան
ընկերութիւն մը հաստատուեցաւ , տը-
պարան մ'ալ բացուեցաւ , Բգգասէր օ-
րագիր մ'ալ ընծայուեցաւ , որ իր զը-
ւարթուն ոգւովը , հայկական զգաց-
մամբ , սուր և զուարճալի դատողու-
թեամբ՝ համալեզու օրագրաց մէջ վե-
րադասներէն մէկն եղաւ : Բսիկայ պի-
տի ըլլար մեզի հին Սուղային ընդհա-
նուր գաղթականաց թարգմանը և ծա-
նօթարարը :

Սակայն այսօր , ո՛հ , հնդկաբնակ
Հայ մուղայն երեսը սքօղած , միայն
արցունքներ դուրս կը բերէ . իր Բգգա-
սէր զաւակը հազիւ երկու տարի զուար-
թուն և ուժով կեանք մը քշելով , բա-
ւական լոյս և աւելի յոյս տալով , տար-
ւոյս մայիս ամսուն մէջ ինքն իր վախ-
ձանը կը գուժէ . որուն պատճառը թող-
լով որ իրմէն իմանան բանասէրը , մու-
ղային հետ կը տրտմինք մեր Բգգասի-
րին վախճանին վրայ : Բայց յիշելով
որ մուղայք անմահ են , իրենց ծնունդն
ալ կրնայ յարութիւն առնել , կը դառ-
նանք այն մուղային աղաչելու՝ որ եր-

կնաւոր շնչով մը նորէն տաքցնէ վառէ
իրմէ հովանաւորեալ սրտերը , որ իրենց
պատիւը Հին Սուղային փառաց հետ
նորէն կանգնեն Սերակենցաղ Բգգա-
սիրով :

ՃՈՒՂԱՅԵՑԻ ՄԸ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հրէքէ :

Հրէքէի կ'անուանին ան ցուցան-
բաւոր այլանդակ գազանները որ աւելի
մտաց երեւակայեալ աշխարհին մէջ կը
գտնուին՝ քան թէ նիւթական երկրիս
վրայ . աս անուանեալ հրէշից մէջ գլխա-
ւորն է (Զուշապարիկը որ սուրբ գիրքն ալ
կը յիշէ , անոր հետ մէկտեղ Հաճաբուն
ալ , որ անշուշտ (Զուշապարիկին մօտ
ազգականը պիտի ըլլայ . (Եյնք ու ա-
նոնցմէ առած ուրիշներն ալ) Իրէնէ կ'ա-
նուանեն զասոնք . մեր մէջ գործա-
ծուած անունները հին Հայոց առաս-
պելաց մէջ ծածկուած են . միայն յայտ-
նի է որ (Զուշապարիկը բարդութիւն
է Պայ , Պայի կամ Պարի անուան , ուս-
կից բարդած է Սարդասայն ալ , ուսկից
խառնած է Սարդասայնադն : Բայ խառ-
նուրդը տեղիք կուտայ կարծելու որ մեր
մէջ Պայ ըսուածը և լծորդները՝ օտա-
րաց մէջ Պան ըսուած անունն է , որով
հետեւ աս Պանը նոխազտան ալ կ'ըսուի ,
Սարդասայն քաղքն ալ նոյնը կը յիշե-
ցնէ , վասն զի Կաղ և Նոխադ նոյն է ,
որ է որչ և Դեծ Կյծ . անոր համար Բյ-
ծաճարդ ալ կ'ըսուի Պան իրեն ձագե-
րովը , որ (Զունաց ստորին աստուածնե-
րուն կարգն էին և անտառներու մէջ կը
բնակէին : Բսկէց կրնանք ըսել թէ
Հայոց և ընդհանրապէս արեւելեայց՝ ո-
րով սուրբ գրոց ալ (Զուշապարիկները
ցամաքային էին , իսկ (Եյնք ցամաքայ-
նոց միայն Պայ կամ Պան կ'ըսէին , և
իրենց բուն (Զուշապարիկ ըսածը աւե-

1 Մարդապայ և Մարդապայբաղ , ըստ բանա-
սիրի ուրումն :